ՀԱՅԿԱԿԱՆ 76-ՐԴ ԴԻՎԻԶԻԱՆ 1922—1940 ԹԹ.

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սովետական բանակի ազգային զորամասերի տարեգրության մեջ իր արժանի տեղն ունի Կ. Ե. Վորոշիլովի անվան Հայկական 76-րդ կարմրադրոշ լեռնահրաձգային դիվիզիան, որը ծնվել է Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար մղված պայքարում, կոփվել քաղաքացիական կռիվներում, առնականացել խաղաղ շինարարության տարիներին և փառապանծ մարտական ուղի անցել Հայրենական մեծ պատերազմում։

Դիվիզիայի շարքերում են աճել ՍՍՀՄ զինված ուժերի ճանաչված զորահրամանատարներ, Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը, զրահատանկային զորքերի մարշալ Հ. Խ. Բաբաջանյանը, շուրջ 50 գեներալներ և Սովետական Միության նույնքան հերոսներ, մի քանի հազար սպաներ, 30 հազար շքանշանակիրներ և մեդալակիրներ։

Հայկական 76-րդ դիվիզիան կազմավորվել է 1922 թ. սեպտեմբերի 5-ին առանձին հայկական հավաքական բրիգադի հիման վրա, որն ստեղծվել էր Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո[1]*։*

Իր կազմավորման առաջին օրվանից Հայկական 76-րդ դիվիզիան գտնվել է կուսակցական և պետական օրգանների ուշադրության կենտրոնում։ Դեռևս 1923 թ. փետրվարին ՀԿ(բ)Կ II համագումարը բանաձև ընդունեց հայկական դիվիզիայի մասին, որտեղ առաջարկվում էր կարգավորել զինծառայողների ընտանիքներին ցույց տրվող նյութական օգնության հարցը, հրամքաղկազմի դրությունը բարելավելու նպատակով բաց թողնել անհրաժեշտ միջոցներ, կարմիրբանակայինների անգրագիտությունը վերացնելու նպատակով դիվիզիայի քաղբաժնի տրամադրության տակ դնել ուսուցիչներ, ակտիվացնել զորամասերում տարվող կուլտուր-շեֆական աշխատանքները և այլն[2]*։ Նույն թվականի սեպտեմբերի 24—26-ին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշում ընդունեց 1902 թ. ծնված կոմունիստներին ու կոմերիտականներին ժամկետից շուտ բանակ զորակոչելու, ինչպես նաև հրամանատարական ու քաղաքական դասընթացների համալրման գործը կարգավորելու մասին*[3]*։*

Հայկական գիվիզիայի կազմավորման, մարտունակության ամրապնդման գործում կարևոր դեր խաղաց ՀՍՍՀ ԺողկոմսովետԻ նախագահ և ռազմժողկոմ Ա. Ֆ. Մյասնիկյանը։ Նրա նախաձեռնությամբ Երևանում կազմակերպվեց ռազմական դպրոց, որը դարձավ մարտական կադրերի պատրաստման դարբնոց[4]*։ Դիվիզիայի մարտունակության ամրապնդման գործում կարևոր դեր*

---

1 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՊՄԱ), ֆ. 51 գվարդիական հրաձգային գիվիզիայի (այսուհետև՝ ԳՀԴ), ց. 1, գ. 2, թ. 1։

2 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 1, ց. 2, գ. 6, թթ. 23—24։

3 Նույն տեղում, ց. 1, գ. 11, թթ. 10—13։

4 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 3, էջ 121—134։

խաղաց նաև քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս Հայկ Բժշկյանը (Գայ), որը իր ամբողջ գիտելիքներն ու ռազմական հարուստ փորձն ի սպաս դրեց հայկական դիվիզիայի կոփման ու ամրապնդման գործին։

Դիվիզիան իր կազմավորման առաջին իսկ օրից շրջապատվեց համաժողովրդական հոգատարությամբ։ 1922 թ. քաղաքացիական կազմակերպությունները ստանձնել էին դիվիզիայի շեֆությունը։ Այդ աշխատանքը գլխավորում էր շեֆբյուրոն (նախագահ՝ ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահ Սաքո Համբարձումյան)[5]։ Շեֆական աշխատանքներն էլ ավելի էին մերձեցնում բանակը ժողովրդի հետ։

Դիվիզիայի մարտական և քաղաքական ուսուցման աշխատանքները կանոնավոր հիմքի վրա դնելու գործում կարևոր դեր խաղացին դիվիզիայի քաղբաժինը, զորամասերի քաղապարատները, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները։

Դիվիզիայի անձնակազմի մարտական պատրաստության, քաղաքական ուսուցման, կուլտուրական կյանքի ու կենցաղի կազմակերպման հարցերում կարևոր դեր են խաղացել քաղբաժնի օրգան «Կարմիր զինվոր» թերթը, «Կարմիր մարտիկ» ռազմա-քաղաքական հանդեսը[6], գնդերի կուսակազմակերպությունների «Կարմիրբանակային թերթը» (I և II գունդ), «Կարմիր երկրային» (III գունդ), «Գրոհ» (Հեծյալ գունդ), «Որոտ» (Հրետանային գունդ) բազմատիրաժ թերթերն, ինչպես նաև զորանոցների կարմիր անկյունները (1924 թ. հունվարի 21-ից կոչվել են լենինյան անկյուններ), գնդային ակումբները, կարմիր բանակի տները։

Հայկական դիվիզիան ակտիվ մասնակցություն է ունեցել կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական շինարարության աշխատանքներին։ Հատկապես մեծ հաջողություններ ձեռք բերվեց կարմիրբանակայինների անգրագիտության վերացման գործում։ Դիվիզիայի քաղբաժինը կուլտուր-լուսավորչական աշխատանքներ ծավալեց նաև գյուղում, քանի որ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «բանակը հանդիսանում է գիտակցականության լավագույն տարածողը գյուղացիության շարքերում»[7]։ Դիվիզիայի շինարարական բրիգադները ակտիվ մասնակցություն ունեցան նաև Շիրակի ջրանցքի, Երևանի, Քանաքեռի, Զորագետի հիդրոէլեկտրակայանների, Կիրովականի քիմկոմբինատի, հանրապետության ժողովրդական տնտեսության մյուս առաջնեկների կառուցման գործում։ Նրա զորամասերում բացված դասընթացներում կարմիրբանակայինները ձեռք էին բերում տարբեր մասնագիտություններ և զորացրվելուց հետո համալրում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության շարքերը։ Միայն 1930 թ. այդ դասընթացներն ավարտեցին 1396 կարմիրբանակայիններ, որոնք ստացան տրակտորիստի, ռադիստի, ճանապարհաշինարարի, հաշվետարի և այլ մասնագիտություններ[8]։

---

5 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 688, ց. 2, գ. 2, թթ. 8—10։

6 Հանդեսը լույս է տեսել 1923—1925 թթ.։ Այն կոչվել է նաև «Պահակ», «Հեղափոխության պահակ»։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 136։

8 Սովետական բանակի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՍԲՊԿԱ), ֆ. 216, ց. 2, գ. 307, թթ. 111—112։

Դիվիզիան ակտիվորեն մասնակցելով Սովետական Հայաստանի սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական շինարարության աշխատանքներին, միաժամանակ, բարձր հիմքերի վրա պահեց իր մարտական պատրաստությունը։ Այդ ասպարեզում մեծ աշխատանք կատարեցին դիվիզիայի բազմաթիվ հրամանատարներ։ Նրա անձնակազմի մարտական և քաղաքական ուսուցման ընթացքում մեծ ուշադրություն էր դարձվում մարտիկների տեսական և գործնական պատրաստության վրա։

1926 թ. ամառային միացյալ հավաքում Կովկասյան կարմրադրոշ բանակի (այսուհետև՝ ԿԿԲ) ազգային ռազմական դպրոցների միջև կազմակերպված հրաձգային մրցումներում առաջին տեղը գրավեց Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը։ Անհատական մրցումներում բացարձակ չեմպիոն դարձավ այդ դպրոցի սան Բ. Ի. Առուշանյանը (հետագայում դեներալ-լեյտենանտ)[9]։ Նույն տարում, դարձյալ հրաձգության գծով, ամբողջ ԿԿԲ-ում առաջին տեղը գրավեց ՀՀԴ-ի Լ. Մխչյանի անվան I հրաձգային գունդը[10]։ Հաջորդ տարում, ինչպես նշել է ԿԿԲ-ի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկին, «Հայկական դիվիզիան, համեմատած անցյալ տարվա հետ, ձեռք է բերել խոշոր նվաճումներ։ Այն պարապմունքները, որոնց ես ներկա էի (տաքնապ, գիշերային երթ, ճամբարային ամենօրյա ուսուցում և այլն), լիովին ապացուցում են իմ այդ հիմնական եզրակացությունը»[11]։

Նույն թվականի հուլիսին ՀՀԴ-ի հրետանային գնդի Ա. Բոյաջյանի հաուբիցային մարտկոցը ԿԿԲ-ի հատուկ հրետանային հավաքի մրցումներում հաղթող ճանաչվեց և արժանացավ լավագույնի կոչման՝ ստանալով ՍՍՀՄ ՌՀԽ-ի անվան երրորդ կարգի պարգև[12]։ Այդ նույն հավաքում աչքի ընկան նաև ՀՀԴ-ի հրետգնդի 10-րդ հաուբիցային մարտկոցը՝ Կարապետ Հախնազարյանի (հետագայում հրետանու դեներալ-մայոր), 9-րդ հաուբիցային մարտկոցը՝ Տիգրան Գյուլբուդաղյանի (այժմ պաշտոնաթող գնդապետ) հրամանատարությամբ, որոնք նույնպես ստացան ՍՍՀՄ ՌՀԽ-ի անվան պարգևներ[13]։ Հրաձգության գծով առաջին տեղը գրավեց ՀՀԴ-ի Լ. Մխչյանի անվան 1-ին հրաձգային գունդը (հրամանատար՝ Ն. Զ. Դոնդարյան, զինկոմ՝ Խ. Հ. Աբրահամյան)[14]։ Աշնանը տեղի ունեցած զորախաղերը ցույց տվեցին միավորման մարտական պատրաստության բարձր մակարդակը։ Այդ զորախաղերում ՀՀԴ-ն հրացանով կրակելու գծով ամբողջ ԿԿԲ-ում գրավեց առաջին տեղը[15]։

30-ական թվականների սկզբներին դիվիզիան լեռնային պայմաններում անցավ զորքերի պլանային ուսուցմանը[16]։ Տակտիկական պարապմունքների ընթացքում մեծ ուշադրություն դարձվեց լեռնային արգելքների հաղթահարմանը և մարտական տեխնիկան դժվարին պայմաններում օգտագործելուն։

Մարտական և քաղաքական ուսուցման բնագավառում դիվիզիայի ձեռք բերած հաջողությունները բարձր են գնահատվել հրամանատարության և կա-

9 Տե՛ս «Կարմիր զինվոր», 5. VII. 1926։
10 ՍԲՊԿԱ, ֆ. 34912, ց. 2, գ. 300, թ. 10։
11 «Կարմիր զինվոր», 5. VII. 1927։
12 ՍԲՊԿԱ, ֆ. 34912, ց. 1, գ. 1497, թ. 2։
13 Նույն տեղում։
14 ՍԲՊԿԱ, ֆ. 34912, ց. 2, գ. 300, թ. 10։
15 «Краснознаменный Закавказский», М., 1969, стр. 17.
16 1931 թ. հոկտեմբերին դիվիզիան դարձավ լեռնահրաձգային։

ռավարության կողմից։ Դիվիզիայի 10-ամյակի կապակցությամբ, 1931 թ. հունվարի 14-ին ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահության և Ժողկոմսովետի որոշմամբ 66 հրամքաղաշխատողներ պարգևատրվեցին «Տասնամյակի նշանով»[17]։

Մարտական և քաղաքական գերազանց պատրաստությամբ 1931 թ. աշքի ընկավ դիվիզիայի 2-րդ լեռնահրաձգային գունդը (հրամանատար-կոմիսար՝ Ա. Ա. Հովակիմյան), որը հաղթող ճանաչվելով ԿԿԲ-ի ազգային զորամասերի միջև կազմակերպված սոցիալիստական մրցության մեջ, արժանացավ Բաքվի սովետի կողմից սահմանված փոխանցիկ դրոշին։ Հաջորդ տարին գունդը դարձյալ հաղթող ճանաչվեց։ 1933 թ. երկրորդ անգամ անընդմեջ հաղթող ճանաչվելու համար դրոշը ընդմիշտ հանձնվեց 2-րդ գնդին[18]։ Համառ պայքարով ձեռք բերված նվաճումների համար գունդը նույն թվականին արժանացավ նաև ՀԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ դրոշին[19]։ 1934 թ. մարտին ՀԿ(բ)Կ IX համագումարին տված իր հաշվետու զեկուցման մեջ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանն ասաց. «Հաշվետու ժամանակաշրջանում դիվիզիան էլ ավելի է ամրապնդվել։ Անձնակազմի բարոյա-քաղաքական վիճակը գտնվում է բարձր մակարդակի վրա։ Այս տարի ռազմահեղափոխական խորհրդի հատուկ տեսչական հանձնաժողովը, ստուգելով դիվիզիայի մարտական և քաղաքական պատրաստության վիճակը, տվեց լավ գնահատական։ Սակայն դա չպետք է հանգստացնի հրամանատարներին և քաղաշխատողներին... 1934 թ. դիվիզիայի հիմնական խնդիրը պետք է լինի վերացնել դեռևս նկատվող թերությունները և հաջորդ տեսչական ստուգման ժամանակ մարտական և քաղաքական պատրաստության բոլոր ցուցանիշներով արժանանալ գերազանց գնահատականի...»[20]։

1934 թ. աշնանը տեղի ունեցած տեսչական ստուգումների ժամանակ դիվիզիայի մարտական և քաղաքական պատրաստության ընդհանուր վիճակին տրվեց գերազանց գնահատական[21]։ Դիվիզիայի զորամասերի մեջ, առավել բարձր ցուցանիշներով, առաջին տեղը գրավեց երրորդ լեռնահրաձգային գունդը (հրամանատար-կոմիսար՝ Ս. Ասոյան, քաղօգնական՝ Ս. Ղահրամանյան)[22]։

Դիվիզիայի ձեռք բերած մեծ հաջողությունների կապակցությամբ ԿԿԲ-ի հրամանատար Մ. Կ. Լևանդովսկին ողջույնի հեռագիր ուղարկեց դիվիզիայի հրամանատար-կոմիսար Հ. Թ. Աթոյանին։ Այնտեղ ասված էր. «Սրտանց ուրախ եմ դիվիզիայի մարտական պատրաստության փայլուն արդյունքներով... Հավատում եմ, որ գերազանց նվաճումները, որպես դիվիզիայի պատվավոր նոր կյանքի սկիզբ, կհանդիսանան զորամասերի համար ավանդույթ՝ աշխատելու, սովորելու և մարտնչելու, որտեղ էլ լինեն և ինչ պարագայում էլ գտնվեն, միայն գերազանց ու գերազանց ցուցանիշների համար»[23]։

---

17 Տե՛ս «Կարմիր զինվոր», 15. I. 1931։
18 ՍԲՊԿԱ, ֆ. 34912, ց. 1, գ. 1083, թ. 9։
19 ՄԼԻ արխիվ, ֆ. 48, ց. 4, գ. 301, թթ. 12—14։
20 Նույն տեղում, ֆ. 1, ց. 22, գ. 1, թ. 40։
21 Տե՛ս «Կարմիր զինվոր», 24. IX. 1934։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում։

1935 թ. տեսչական ստուգումների ժամանակ դիվիզիայի բոլոր զորամասերը մարտական և քաղաքական պատրաստության գծով դարձյալ ցույց տվեցին գերազանց ցուցանիշներ։ Ձեռք բերած նվաճումների համար ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահության 1935 թ. դեկտեմբերի 2-ի հրամանագրով Հայկական գիվիզիան կոչվեց Կ. Ե. Վորոշիլովի անունով[24]։ ՀՍՍՀ 15-ամյակի կապակցությամբ, 1936 թ. հունվարի 7-ին ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահությունը շքանշաններով պարգևատրեց հանրապետության 14 առաջավորներին, որոնց թվում էին նաև հայկական դիվիզիայի առաջին լեռնահրաձգային գնդի հրաձգային ջոկի օրինակելի հրամանատար Մամիկոն Շահբազյանը, որն ստացավ Պատվո նշան շքանշան, իսկ դիվիզիայի նախկին զինվոր, Ղափանի պզնձահանքերի անվանի հանքափոր Մինաս Պապյանը՝ Լենինի շքանշան[25]։

1936 թ. մայիսի 29-ին ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահությունը դաշնակների դեմ մղված պայքարում ցույց տված մարտական քաջագործությունների, հայկական ազգային ռազմական կադրեր աճեցնելու գծով տարած աշխատանքի, մարտական ու քաղաքական պատրաստության գործում ունեցած հաջողությունների համար, Կ. Ե. Վորոշիլովի անվան հայկական լեռնահրաձգային դիվիզիան պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով։ Դիվիզիայի հրամանատար-կոմիսար Հ. Թ. Աթոյանը, քաղբաժնի պետ, բրիգադային կոմիսար Խ. Հ. Աբրահամյանը, երկրորդ լեռնահրաձգային գնդի հրամանատար-կոմիսար, կապիտան Ռ. Խ. Հովակիմյանը և առանձին տանկային վաշտի կրտսեր հրամանատար Ս. Ե. Ոպյանը պարգևատրվեցին Կարմիր աստղի, իսկ հրետգնդի մարտկոցի հրամանատար, կապիտան Ա. Գ. Հակոբյանը, առանձին հեծյալ էսկադրոնի հրամանատար-կոմիսար, ավագ լեյտենանտ Վ. Ս. Վարդանյանը, III լեռնահրաձգային գնդի վաշտի հրամանատար-քաղղեկ, ավագ լեյտենանտ Ն. Գ. Սաֆարյանը, առաջին գնդի ադրբեջանական վաշտի դասակի հրամանատար, լեյտենանտ Ա. Ս. Փիրիևը, երկրորդ գնդի քրդական վաշտի ավագ Հաջոյե Ջալիլը, ավիաջոկատի մոտորիստ Ե. Ե. Մելքոնյանը, առաջին գնդի պարաշյուտային գործերի հրահանգիչ Գ. Գ. Սարդսյանը և կապի վաշտի կարմիր բանակային Վ. Ռ. Հովհաննիսյանը՝ Պատվո նշան շքանշանով[26]։

Նույն թվականի հուլիսի 17-ին Անդրկովկասյան զինվորական օկրուգի ՌՀԽ-ի հրամանով հայկական դիվիզիան ստացավ 76-րդ անվանումը[27]։

1936 թ. հաջողությամբ անցկացնելով ամառային ուսուցման շրջանը և աշնանային զորաշարժերը, դիվիզիան տեսչական ստուգումների ժամանակ դարձյալ արժանացավ բարձրագույն գնահատականի։ Ամփոփելով 1936 թ. դիվիզիայի ձեռք բերած նվաճումները՝ Հ. Թ. Աթոյանը ԲԳԿԲ-ի 19-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում հայտարարեց. «Եվ այսօր մենք հպարտությամբ կարող ենք նշել, որ ամբողջ ԲԳԿԲ-ում, կրակային պատրաստության բնագավառում գերազանց ցուցանիշներ ունեցող դիվիզիաների շարքում, հայկական դիվիզիան գրավում է V տեղը, իսկ մարտական հրաձգության բնագավառում՝ I տեղը[28]։

24 ՍԲՊԿԱ, ֆ. 25873, ց. 6, գ. 279, թ. 140։
25 Տե՛ս «Կարմիր զինվոր», 9. I. 1936։
26 «Известия», 30. V. 1936.
27 ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 51, ԳՀԴ, ց. 1, գ. 2, թ. 3։
28 «Կարմիր զինվոր», 23. II. 1937։

1938 թ. մարտի 7-ին Համկ(բ)կ ԿԿ-ն և ՍՍՀՄ ԺԿԽ-ը որոշում ընդունեցին ազգային զորամասերը վերակազմավորելու մասին[29]։

76-րդ դիվիզիան վերակազմավորումից հետո դարձյալ մնաց Հայաստանում։

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին, դիվիզիան համալրվելով, ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը. նրա անձնակազմի կեսից ավելին հայեր էին[30]։ Այնուհետև «նա միշտ գործել է ռազմաճակատի ամենաակտիվ տեղամասերում և պատերազմի պատմության տարեգրության մեջ գրել ոչ քիչ փառապանծ էջեր»,—նշել է դիվիզիայի նախկին հրամանատարներից՝ բանակի գեներալ Վ. Ա. Պենկովսկին[31]։

76-ая АРМЯНСКАЯ ДИВИЗИЯ В 1922—1940 гг.

К. А. АРУТЮНЯН

Резюме

В рядах 76-ой армянской стрелковой дивизии выросли прославленные военачальники: маршал Советского Союза И. Х. Баграмян, маршал бронетанковых войск А. Х. Бабаджанян, генералы: С. С. Мартиросян, Б. И. Арушанян, Г. А. Тер-Гаспарян, С. И. Гиносян, А. Г. Карапетян, Н. Г. Сафарян, Г. О. Мартиросян, А. А. Казарян и многие другие.

Дивизия родилась в Армении в годы борьбы за утверждение советской власти, окрепла в битвах гражданской войны, возмужала в годы мирного строительства и прошла славный боевой путь в годы Великой Отечественной войны.

В мирные годы дивизия активно участвовала в социалистическом строительстве, одновременно сохраняя свою высокую боевую и политическую подготовку, за что в 1935 г. ей было присвоено имя маршала Советского Союза К. Е. Ворошилова, а в 1936 г. наградили ее орденом Красного Знамени.

В годы Великой Отечественной войны дивизия была удостоена гвардейского звания, а также награждена орденом Ленина.

---

29 См. «КПСС о Вооруженных Силах Советского Союза, документы, 1917—1968», М., 1969, стр. 294.

30 *ՍՊՊԿԱ, ֆ. 25873, ց. 6, գ. 369, թթ. 2—4 և ՍՍՀՄ ՊՄԱ, ֆ. 51, ԳՀԴ, ց. 1, գ. 17, թ. 29։*

31 *ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 688, ց. 3, գ. 37, թթ. 1—8։*